

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Նախագծի ղեկավարներ՝

Ս.ԱՌՈՇԱՆՅԱՆ

Է.ԻՍԱՀԱԿՅԱՆ

Թեմա՝

«Երկրաչափական պատկերները հայկական զարդանախշերում»

Նախագծի անվանում՝	Երկրաչափական պատկերները հայկական զարդանախշերում
Առարկա(ներ)՝	Մաթեմատիկա - կերպարվեստ
Ուսումնական տարի, կիսամյակ՝	2023-2024 ուստարի, I կիսամյակ
Տևողություն՝	Միջնաժամկետ
Դասարան՝	7-րդ
Աշակերտների թիվ՝	11
Տեսակը՝	Միջառարկայական
Զնաչափը՝	<input type="checkbox"/> տեսական <input type="checkbox"/> գործնական <input type="checkbox"/> անհատական <u>v թիմային</u> <input type="checkbox"/> ընթացիկ <input type="checkbox"/> ամփոփիչ

Նախագծի նպատակը՝

- Երկրաչափական պատկերների ուսումնասիրում և նրանց կիրառումը հայկական զարդանախշերում:
- Նախորդ դասարաններում ուսումնասիրված երկրաչափական պատկերների վերաբերյալ գիտելիքների համակարգում:
- Հավասար պատկերների հասկացություն:
- Երկրաչափական պատկերների ճանաչում և պատկերում գծագրերով:
- Կարողալ գծագրերից և ստեղծել գծագիր:

Նախագծի վերջնարդյունքները`

- 1. Ճանաչել երկրաչափական պատկերները, տարբերել և անվանել դրանք:**
- 2. Կառուցել և գծագրել պատկերները:**
- 3. Ձևակերպել և կառուցել տրվածին հավասար և համաչափ պատկերներ, մեծ ու փոքր հատվածներ և անկյուններ:**
- 4. Պարզ և ծանոթ իրադրություններում կիրառել ստացած գիտելիքը:**
- 5. Չարգացնել աչքաչափը:**

**Նախագծի նկարագիրը
Դասերի ընթացքի նկարագրություն**

Երկրաչափական պատկերները հայկական զարդանախշերում

Ենթաթեմաներ՝

- Հայկական զարդանախշերում օգտագործվող երկրաչափական պատկերները:
- Կիրառվող երկրաչափական պատկերների ծանոթացում, կառուցում, գծագրում, վերլուծում:
- Նոր զարդանախշերի ստեղծում:

Դաս 1 10.10.2023թ.

Ուսումնասիրել հայկական զարդանախշերը և դուրս բերել օգտագործված երկրաչափական պատկերները:

Դաս 2 12.10.2023թ.

Ուսումնասիրել հայկական զարդանախշերը:

Ենթաթեմաներ՝

- Ինչպես է ստեղծվել հայկական զարդարվեստը, զարդանախշերը:
- Զարդանախշերի տեսակները (բուսական, երկրաչափական, կենդանական):

Տարբերել հայկական զարդանախշերը արևելյան այլ զարդանախշերից:

Դաս 3 17.10.2023թ.

Հավաքել տեղեկություններ ուսումնասիրված զարդանախշերում օգտագործված երկրաչափական պատկերների մասին:

Դաս 4 19.10.2023թ.

Ուսումնասիրել և գտնել հայկական զարդանախշերում երկրաչափական պատկերները

- Գրել տեղեկություն
- Պատկերների ուսումնասիրում

Դաս 5 26.10.2023թ.

Աշխատանքների բաշխում.

1. Գրիգորյան Արեգ - Շեղանկյուն
2. Հայրապետյան Լևոն - Խորանարդ
3. Փափազյան Վահե - Քառակուսի
4. Բաղալյան Ռոբերտ - Եռանկյուն
5. Հակոբյան Ջուլյա - Շեղանկյուն, շրջանագիծ
6. Քոթուկյան Էլիզաբեթ - Քառակուսի ուղղանկյուն
7. Արաջյան Աֆինա - Եռանկյուն, քառակուսի
8. Նիկողոսյան Արմեն - Անկյուն, հավասար անկյուն
9. Տերտերյան Գարիկ - Եռանկյուն, շրջանագիծ, քառակուսի
10. Ղազարյան Աիդա - Եռանկյուն, շրջանագիծ
11. Ղազարյան Մարինա - Քառակուսի, անկյուն

Դաս 6 31.10.2023թ.

Հավասար պատկերների հասկացություն:

Կառուցել տրված պատկերին հավասար և համաչափ պատկերներ:

Դաս 7 7.11.2023թ.

Երկրաչափական պատկերների գծագրերի ստեղծում, ձևափոխում և գծագրում: Կառուցումներ դինամիկ մաթեմատիկայի ծրագրով:

Դաս 8 14.11.2023թ.

Աշխատանքների վերանայում, սխալների շտկում: Տեսաերիզների նախնական դիտում:

Դաս 9 16.11.2023թ.

Սահիկաշարի ստեղծում

Ենթաթեմաներ`

- Ներառել տեղեկություն հայկական զարդանախշերի մասին :
- Իրեն ընտրած երկրաչափական պատկերներից ստեղծել հայկական զարդանախշեր:

Դաս 10 21.11.2023թ.

Ստեղծել հայկական զարդանախշեր և լոգոներ ընտրված երկրաչափական պատկերներից:

Դաս 11 23.11.2023թ.

Ներկայացնել իրենց պատկերացումով ստեղծած զարդանախշերը:

Դաս 12 28.11.2023թ.

Ամփոփում:

Նախագծի ներկայացում:

Արդյունքներ:

Կարողունակություններ, որոնք կգարգանան այս նախագծի ընթացքում

- Կգարգանա սովորողների՝ երևակայությունը, պատկերավոր մտածողությունը, դիտողականությունը, ուշադրությունը, նպատակասլացությունը, աշխատասիրությունը:
- Կգարգանա գեղեցիկը տեսնելու, զգալու, գնահատելու, արարելու ցանկությունը և կարողությունը:

Միջառարկայական կապեր

«Կերպարվեստը» բազմաբնույթ առարկա է, որն ընդգրկում է գրաֆիկա (երկրաչափություն, գծագրություն)

Երկրաչափություն առարկան գտնվում է զարդանախշերի ստեղծման հիմքում, այդ պատճառով պետք է ուսումնասիրել և լավ տիրապետել երկրաչափություն առարկան

- Երկրաչափական պատկերների և մարմինների օգտագործում
- Ձևավորման աշխատանքների իրականացում
- Մարմինների, տարբեր առարկաների պատկերում, համեմատում և նկարագրում
- Երկրաչափական պատկերներ և հայկական զարդանախշեր պատրաստելիս չափումների կատարում, դետալների գծագրում:

Նախագծի վերջնարդյունքների ներկայացման տեսակներ

Ամսագիր կամ թերթ, պաստառ

Վեբ-կայք

Տեսանյութ

Վ Սահիկաշար

Տեղեկատվական թերթիկ

Վ Շահիկ զարդանախշով և երկրաչափական պատկերով

Ձայնվածք (փողբասթ)

Գրքի նկարագարում

Հետազոտության աղբյուրներ

Անհրաժեշտության դեպքում ուսուցիչը տրամադրում է կա՛մ ամբողջական, կա՛մ մասնակի աղբյուրներ:

Գրքեր նվիրված երկրաչափական պատկերներին և հայկական զարդանախշերին:
 Կայքեր՝ <http://arvestagir.am> , <https://hy.wikipedia.org/>, <https://hy.khanacademy.org/> ,
<https://www.imdproc.am/> , <https://fliphtml5.com/bookcase/hsma>

Գնահատում

N	Ազգանուն, անուն	ընթացք (6)			բովանդակության ունի (8)				Ներկայացում (6)		միավոր	գնահատական
		նախապարտադրական (1)	բուն ընթացք (4)	ամբողջում (1)	համապատասխանության ունի թեմայի ին (3)	ամբողջականության ունի (2)	հիմնավորվածության ունի (2)	գրաֆիկականության ունի (1)	ձև (3)	խոսք (3)		
1	Գրիգորյան Կեդզ	1	2	1	3	1	2	1	3	3	17	8
2	Հայրապետյան Լևոն	1	3	1	3	1	2	1	3	2	17	8
3	Փափաջյան Վահե	1	3	1	3	1	2	1	3	2	17	8
4	Բարսեղյան Ռոբերտ	1	3	1	3	1	2	1	3	2	17	8
5	Հակոբյան Տիգրան	1	4	1	3	2	2	1	3	2	19	9
6	Բրտանյան Էդգար	1	4	1	3	1	2	1	3	2	18	9
7	Կիսիկյան Արմեն	1	4	1	3	2	2	1	3	2	19	9
8	Մկրտչյան Կոնստանտին	1	3	1	3	1	2	1	3	2	17	8
9	Տերտերյան Գրիգոր	1	2	1	3	2	2	1	3	2	17	8
10	Նազարյան Կոնստանտին	1	4	1	3	2	2	1	3	2	19	9
11	Նազարյան Արմեն	1	4	1	3	2	2	1	3	2	19	9

Հաշվետվություն

«Երկրաչափական պատկերները հայկական զարդանախշերում» նախագիծն իրականացրինք որպես 7-րդ դասարանում նոր առարկայի՝ ԵՐԿՐԱԶՍՓՈՒԹՅԱՆ հիմք, քանի որ աշակերտները դժվարությունների են հանդիպում <<Մաթեմատիկա>> առարկայից անցնելով <<Հանրահաշիվ և երկրաչափություն>> առարկաների:

Նախագծին մասնակցում էին 7-րդ դասարանի 11 աշակերտներ: Աշակերտները մեծ սիրով և ոգևորությամբ կատարեցին բոլոր աշխատանքները. ուսումնասիրեցին հայկական զարդանախշերը, դուրս բերեցին նրանցում օգտագործված երկրաչափական պատկերները, ծանոթացան կիրառվող երկրաչափական պատկերներին, կարողացան կատարել ճիշտ և հավասար գծագրեր, որոնք նաև վերլուծեցին:

Նպատակներից մեկը երկրաչափական պատկերների ուսումնասիրումն էր, ճանաչումը և պատկերումը գծագրելով, ինչպես նաև նրանց վերաբերյալ գիտելիքների համակարգումը և իրենց կողմից հայկական զարդանախշերի ստեղծումը:

Նպատակներից մյուսը աշակերտների համար երկրաչափություն առարկան առավել գրավիչ, հետաքրքիր և սիրելի դարձնելն է:

Ուսումնասիրելով հայկական զարդանախշերի պատմությունը՝ աշակերտները կարողացան տարբերել հայկական զարդանախշերը արևելյան զարդանախշերից:

Կրկնօրինակելով հայկական զարդանախշերը՝ աշակերտները ստեղծեցին իրենց իսկ պատկերացումով նոր երկրաչափական պատկերներով զարդանախշեր:

Սկզբնական, այսինքն՝ անելիքների պլանավորման փուլում ավելի ակտիվ էին աղջիկները, իսկ տղաներն ակտիվ աշխատեցին ընթացքում: Իրականացման փուլում նրանք շատ հուզված էին՝ մտածելով, թե ինչպես կգնահատվեն իրենց աշխատանքների արդյունքները: Յուրաքանչյուրը ներկայացրեց իր նախագծային աշխատանքը տեսաերիզների միջոցով, իսկ աղջիկներն ունեին նաև իրենց կողմից ստեղծված և նկարված զարդանախշերով ու երկրաչափական պատկերներով շապիկներ:

Աշխատանքներն ամփոփվեցին գեղեցիկ հաշվետվություններով:

Ուսուցիչներ՝

Ս.Առուշանյան

Է.Իսահակյան

Առաջարկություններ

Նախագիծը կարելի էր իրականացնել երկարաժամկետ, քանի որ համարում ենք, որ դեռ մենք անելիքներ ունենք: